չիսթուած կեանքից յետոյ՝ նորան դարձեալ տեսնել բարեկարգ և իրեն վայել վիճակում, ամենքի տենչն է։ Ցանկանք, որ նկատուած լաւ նշանները աւելի ևս զարգանան և յարատև լինին։

Անցեալ համարում յայտնել էինք, որ Կարապետ Ծ. վարդապետն ընտրուած է միաձայն Ատրպատականի առաջնորդ։ Հոկտեմբերի 23-ին Թաւրիզի պատգամաւորների հետ ճանապարհ ընկաւ նա իւր նոր պաշտօնատեղին։

Ս. Հայրապետի մահուամբ անկարելի է այժմ իրագործել «Արարատը» շաբաթաթերթի դարձնելու միտքը, որի մասին հաղորդել էինք անցեալ անգամ։ Այդ խնդիրը կմնայ նորընտիր Հայրապետի անօրէնութեամբ լուծել, Սակայն Էջմիածնում խմբուած գրական ուժերը՝ միաբանութիւնից և ճեմարանի ուսուցչական խմբից՝ կազմակերպեն թերթիս յառաջադիմութեան։ Եկող յունուարից «Արարատը» կհրատարակուի երկու բաժնով. ա) պաշտօնական–կրօնական–եկեղեցական, և բ) գրական–բանասիրական–մանկավարժական։ Բացի հեռու և մօտ հին աշխատակիցներից՝ անմիջապէս կմասնակցեն Հ. Հ. Յուսիկ, Երուանդ և Լևոն վարդապետները, միաբանը, իսկ ճեմարանի ուսուցիչներից պ. պ. Բերբերեան, Աբեղեան, Յ. Յովհաննիսեան, Յ. Պետրոսեան, Խոստիկեան, Սամուէլեան և Մնացականեան, ինչպէս և պ. Կ. Մելիք–Շահնազարեան՝ Տմբլաչի Խաչանը։

Ս. Սինոդը Օր. XI. հատ. I մ. 1119 և 1120 յօդուածների համաձայն նոր կաթուղիկոսի ընտրութեան օրը նշանակելով 1908 թ. հոկտ. 30-ին, ծանուցողական հրովարտակներ է ուղարկել Ռուսաստանի և արտասահմանի Հայոց բոլոր թեմերին։ Ռուսաստանի առաջնորդներին Սինոդն ուղարկել է ծանուցագրերն անմիջապէս, իսկ արտասահմանի թեմերին Տ. Փոխարքայի դիւանի միջո-

ցաւ, համապատասխան դեսպանատների ձեռքով տեղ հասցնելու։ Ս. Սինոդը իւր այս կարգադրութիւնն արել է հետևողութեամբ ի Տէր հանգուցեալ Մակար և Մկրտիչ կաթուղիկոսների ընտրութեան և համաձայն Կովկասի քաղաքական մասի կառավարչապետի գրութեան ի 25 հոկտ. 1891 թ.։ Արտասահմանի թերթերից ծանուցողական հրովարտակներ ուղարկուած են Կ. Պոլսոյ և Երուսաղեմի Ամենապատիւ Պատրիարքներին, Կիլիկիոյ Տան Վեհաշնորհ Կաթուղիկոսին, Աղթամարայ կաթուղիկոսական տեղապահին և Թուրքիոյ ու Բուլգարիոյ բոլոր առաջնորդներին, ինչպէս և Ատրպատականի, Պարսկաստանի ու Հնդկաստանի առաջնորդներին։ Մի առանձին գրութեամբ էլ Ս. Սինոդը հաղորդելով Տ. Փոխարքային, Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի երկու նոր թեմերի հաստատման մասին, հարցնում է, արդեօք նորա կողմից արդելք չկայ Սինոդից ծանուցողական հրովարտակներ ուղարկելու, ինչպէս միւս թեմերին է ուղարկուած։

Իւրաքանչիւր թեմից, ինչպէս յայտնի է, ուղարկւում է երկու պատգամաւոր՝ տեղւոյն առաջնորդը հոգևորականութեան կողմից և մի աշխարհական պատգամաւոր ժողովրդից։ Ռուսաստանի թեմերը 6 են։ Բայց Աստրախանի թեմը այժմ առաջնորդ չունի, իսկ օրէնքի մէջ պարզ ասուած է, որ ծանուցողական հրովարտակներն ուղղուած են թեմական առաջնորդների անուան և նա պիտի լինի պատգամաւոր, կամ ում կնշանակէ իւր կողմից։ Սինոդը օրագրական յատուկ որոշմամբ դիմեց ներքին գործոց Տ. Նախարարին և նորա հրահանգութիւնը խնդրեց, թէ ծանուցողական հրովարտակը ում անունով ուղղէ այդ թեմի համար։ Մի մի ձայն ունին Սինոդի անդամները՝ ներկայ դէպքում հինգ ձայն։ Էջմիածնի միաբանութեան կողմից 7 ձայն՝ որ ստանում են աւագագոյն անդամներն առանց ընտրութեան, Թուրքիայի թեմերը 49 են հաշուած՝ մէջն ընդունելով Երուսաղեմի և Կ. Պոլսոյ պատրիարքական թեմերը, ինչպէս Կիլիկիոյ և Աղթամարի կաթուղիկոսների թեմերը։